ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

14 փետրվարի 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Վարսիկ Ասրյանը, Արմեն Դավթյանը, Անուշ Իսպիրյանը, Վանո Հակոբյանը, Հայկ Մարիկյանը, Արթուր Պապյանը, Արմեն Ջուլհակյանը

Ավագանու անդամ Սյուզաննա Նազարյանը նիստի ներկայացավ ուշացած:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արսեն Հարությունյան, Գագիկ Շիրմազանյան, Լևոն Քալանթարյան, Մարիամ Մանուկյան, Գայանե Ղալաչյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Արսեն Ավագյան, Գևորգ Մանուկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 2 հարց:

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել համայնքի ավագանու նստաշրջանի ութերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 01)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1 Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 139-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2025 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 02)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***

1. Ընդունել Ստեփանավան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 03)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.12.2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 141-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 24.12.2024թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող շարժական գույքը օտարելու մասին» թիվ 141-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 04)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը աջակցելու համար, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ղեկավարությամբ գործում է համայնքների միությունը, որն իրականացնում է բազմաբնույթ միջոցառումներ՝ համայնքների զարգացման ծրագրերի նպատակով: Միության անդամավճարը կազմում է տարեկան 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Վճարել համայնքների միության 2025 թվականի տարեկան անդամավճարը՝ 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 05)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Ստեփանավան համայնքի զարգացման, քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում սահմանված կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողերը:

Ելնելով վերը նշվածից, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006թ. թիվ 570-Ն որոշումը, 17.01.2025թ. թիվ 20012025-06-0003, 17.01.2025թ. թիվ 17012025-06-0026, 17.01.2025թ. թիվ 17012025-06-0055, 17.01.2025թ. թիվ 17012025-06-0041, 17.01.2025թ. թիվ 17012025-06-0051, 26.01.2025թ. թիվ 26012025-06-0001, 24.01.2025թ. թիվ 24012025-06-0058, 24.01.2025թ. թիվ 24012025-06-0036, 24.01.2025թ. թիվ 24012025-06-0027, 05.02.2025թ. թիվ 05022025-06-0103 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համապատասխան, աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ հողամասերը՝

• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 4-րդ փողոց 2 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0028 կադաստրային ծածկագրի 0.14357 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5742800 /հինգ միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր / ՀՀ դրամ:
• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 5-րդ փողոց 3 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0025 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5000000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:
• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 5-րդ փողոց 1 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0029 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5000000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:
• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 4-րդ փողոց 4 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0027 կադաստրային ծածկագրի 0.13806 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5522400 /հինգ միլիոն հինգ հարյուր քսաներկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:
• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սարալանջ թաղամասի 5-րդ փողոց 5 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0026 կադաստրային ծածկագրի 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5000000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ:
• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 9 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0034 կադաստրային ծածկագրի 0.12282 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային

գին սահմանել՝ 4912800 /չորս միլիոն ինը հարյուր տասներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 7 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0033 կադաստրային ծածկագրի 0.12006 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 4802400 /չորս միլիոն ութ հարյուր երկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ:

• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 3 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0031 կադաստրային ծածկագրի 0.13557 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5422800 /հինգ միլիոն չորս հարյուր քսաներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 5 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0032 կադաստրային ծածկագրի 0.12932 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5172800 /հինգ միլիոն մեկ հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

• Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Երիտասարդական փողոց 4-րդ փակուղի 1 հողամաս հասցեում գտնվող 06-007-0344-0030 կադաստրային ծածկագրի 0.13476 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 5390400 /հինգ միլիոն երեք հարյուր իննսուն հազար չորս հարյուր / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 06)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 06-106-0133-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0,4 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով,

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 03.04.2024թ. 03042024-06-0076 սեփականության վկայականը, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 18.12.2024թ. թիվ 2/փ 519 դրական եզրակացությունը Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռու-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝ Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի վարչական սահմանում գտնվող 06-106-0133-0008 կադաստրային ծածկագրի 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ նշված փոփոխություններն արտացոլել Ուրասար բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ուրասար բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 07)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.06.2024 ԹՎԱԿԱՆԻ «ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ(Զեկ. ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 14.06.2024 թվականի «Պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրեր ներկայացնելու մասին» թիվ 63-Ա որոշման երկրորդ պարբերության առաջին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
   • ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Մեղապարտ, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցների հիմնանորոգման և Գ.Նժդեհ փողոցի մայթերի մասնակի նորոգման աշխատանքներ:

   2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 08)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 1206-Ն որոշման , Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Ստեփանավան համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման ներհամայնքային, տեղական և հանրապետական տարանցիկ հատվածների ճանապարհների մասով (սխեման կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 09)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.12.2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 132-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԳՐԻԳՈՐ ՊԱՊՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի Ստեփանավան համայնքի ավագանին. ***որոշում է.***

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքում համայնքին պատկանող հենասյուները վարձակալությամբ տրամադրելու համար վարձավճար սահմանել ամսական 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել 24.12.2024 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական տարածքում համայնքին

պատկանող հենասյուները վարձակալությամբ տրամադրելու համար վարձավճար սահմանելու մասին» թիվ 132-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԳՐԻԳՈՐ ՊԱՊՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.4 կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Ստեփանավան համայնքիվարչական տարածքում ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ ՍԵԴՐԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

2025 թվականի փետրվարի 8-ին Ստեփանավան քաղաքի Աշոտաբերդ թաղամասի թիվ 8 շենքի բռնկված հրդեհի պատճառով մահացել է Արևիկ Ստեփանի Մանուկյանը:
Հաշվի առնելով տվյալ հանգամանքը, Ստեփանավանի համայնքապետարանը դիմել է սգո ծառայություններ մատուցող Ա/Ձ Սեդրակ Բաղդասարյանին, որն էլ իրականացրել է հուղարկավորության արարողությունները, որի ընդհանուր գումարը կազմում է 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, մատուցած ծառայության դիմաց Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***

1. Մատուցած ծառայության դիմաց Ա/Ձ Սեդրակ Բաղդասարյանին տրամադրել 550000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12)*

ԼՍԵՑԻՆ

ԷՄԻԿ ՄԳՐԴԻՉԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Ստեփանավան քաղաքի 5-րդ դպրոցի տարածքի 68 վ/տ հասցեի բնակիչ Էմիկ Մարտիրոսյանը հայտնելով, որ 2024 թվականի դեկտեմբերի 15-ին Երևան քաղաքում որդին՝ Արսեն Շուրիկի Թորոսյանը ենթարկվել է վրաերթի և մահացել:Հուղարկավորության ծախսերը հոգացել է պարտքով վերցրած գումարով և հնարավորություն չունի գումարը վերադարձնելու, դրա համար խնդրում է դրամական աջակցություն:
Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի 5-րդ դպրոցի տարածքի տնակ վ/տ 68 հասցեի բնակիչ Էմիկ Մարտիրոսյանի 14.02.2025թ. թիվ 318 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 18-րդ հոդվածով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Էմիկ Մգրդիչի Մարտիրոսյանին հատկացնել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին. ***որոշում է.***

1. Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 14.03.2025թ. ժամը 14.30 ին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԻԼԻԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հայմիկ Մովսիսյանը

_____